

20

Հեշտութիւն զայ որպէս զաղանի, դառ-
նայ որպէս բազէ:

20

Ձովութիւն ցօղ ամէ, հովութիւն զե-
ղեամբ. քաղցր է բան որպէս զցօղ, այլ
ի դոյզն բռնութենէ փոխի ի ձիւն:

20

Մանուկ ի վիշտս ծաղիկ ի դմնիկս:

20

Ամենայն վիշտ վարդ է յառապարս խա-
շին. այլ ամենայն ուրեք փուշ է:

24

Յոյս յենարան կամրջոյ. քանիցս զյե-
ցեալն ի նա զետամոյն արար:

24

Սէր սաստիկ է ընդ յոյս ամաշէ:

28

Անօթք եմք կանեղէնք, ի ցրտոյ ե ի
տապոյ միօրինակ խորտակիմք:

29

Չարթեայ... ե նժոյգ ժամացուցին չա-
փեալ էր զերիւր մասն ասպարիզին. ժամք
ուրբ դանդաղ — երազունք ի բաց կոր-
զեալ էին ուրբ մասունս յինէն:

29

Չերծար ի սատանայէ՛ լիւր գերի փըր-
կողին:

29

Որ մահու ցանկայ, արդէն մեռեալ է:

31

Բարձրագոյն ցուցաւ ե Աստուած ի
խոնարհեցին:

Շարայարեկի

Հ. Ղ. ԱՆՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԱԶԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Մեր յիշած տնտեսագիտական զարոց-
ներուն առաջինն է ազատական զարոցը
զոր երբեմն կը կոչեն նաև դասական դը-
պրոց սա պատճառաւ որ Բաղադրական Տըն-
տեսութեան բոլոր հիմնադիրները, Բնա-
վարականները, Ատամ Սմիթ, Րիգարտս,
Ժ. — Պ. Սէյ, Ստուարտ Միլլ այդ դը-
պրոցին կը վերաբերին: Ասոնց յաջորդ-
ներուն մէջ՝ Տիւնուաքէ, Պասթիա, Գուր-
սէլ — Սընէյ և Լէօն Սէյ, ի Ֆրանսա .
Մար — Լաւ, Սէնիօր և Գէնըն՝ յԱնգլիա .
Խալիլոյ մէջ՝ Ֆէրրարա. Միացեալ Նա-
հանգաց մէջ՝ Քէրէյ և Ուոլքըր: Անգղիաց-
ւոց ազատական զարոցը կը կոչուի նաև
Մանչեսթրի զարոց, որովհետեւ այս քա-
ղաքին մէջն է որ իր շնորհիւ ազատ փո-
խանակութիւնը յաղթանակած է: Սակայն,
ազատական զարոցը ամենէն աւելի Ֆրան-
սայի մէջ է որ մինչև հիմա բազմաթիւ
հետեւորդներ պահած է. Գիտութեանց Ա-
կադեմիային գրեթէ բոլոր տնտեսագէտ ան-
դամները որպէս և Բաղադրական տնտեսու-
թեան ընկերութեան (Société d'Econo-
mie Politique) անդամները ազատական
զարոցին կուսակից են և ասոնց երիցա-
գոյնն է Մ. տը Մօլինարի, տնօրէն *Journal des Economistes* ր:

Այս զարոցը երբեմն տնտեսականական
(individualiste) զարոց ալ կը կոչուի,
որովհետեւ ան՝ անհատին մէջ՝ կը տեսնէ
տնտեսական գործունէութեան թէ շարժիչ
զօրութիւնը և թէ նպատակը միանգամայն.
սակայն այս զարոցին հակառակորդները՝
զայն ծաղրած ըլլալու համար՝ անոր ողջ
դափառածական մըն ալ կուտան, մա-
սամբ անոր տեսութիւններուն փոքր ինչ
վարդապետական ըլլալուն, և մասամբ ալ
այս զարոցին կողմանէ իր հակառակորդ-

ԿՈՀԱԿ Շարարարերր, Գրական,
քաղաքական, տնտեսական և ընկերային.
— Բաժանորդագինն է Պոլիս և զաւառ-
ները տար. 50 դր. — Արտասահման
12 ֆր. Rédac. du jour. GOHAG

Avenue de la S. Porte
Rue Sépetdj 27.

CONSTANTINOPLE